

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇՆԱՍԿԻՆ



Անակնկալ վախճանվեց ճանաչված պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գնել Ստեփանի Գրիգորյանը, գիտության շնորհաշատ կազմակերպիչն ու հետազոտողը:

Գ. Գրիգորյանը ծնվել է 1947 թ. դեկտեմբերի 29-ին, Աբովյանի շրջանի Կոտայք գյուղում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը: 1963-1967 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո ծառայել է բանակում: Այնուհետև Գ. Գրիգորյանն աշխատել է իր մասնագիտությամբ՝ 1969 թ. սկզբից ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, խորանալով իր նախասիրած՝ միջնադարյան Հայաստանի պատմության հիմնահարցերում: 1982 թ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դդ.» թեմայով: Իր հետագա գիտական աշխատանքը Գ. Գրիգորյանը զուգորդել է գիտակազմակերպչական գործունեությանը: Գիտական արդյունավետ աշխատանքը նրան հասցրեց ավագ գիտաշխատողի պաշտոնին, իսկ 2002 թ. մինչև իր կյանքի վերջը զբաղեցնում էր ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենի տեղը:

Գ. Գրիգորյանը լայնախոհ մտավորական էր, փայլուն ուսումնասիրող: Նրա՝ խորապես տպավորիչ և մնայուն հոդվածները, արխիվային հրապարակումներն ու հաղորդումներն իրենց անկրկնելի տեղն ունեն միջնադարի հայոց պատմությանը նվիրված անցյալի և ներկայի հետազոտությունների մեջ: «Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX- X դդ.» անդրանիկ մենագրությունը, որ հրատարակվել է Երևանում, 1983 թ., առանձնանում է ընդգրկած հիմնահարցերի խորությամբ և գիտական լուծումների թարմությամբ ու համոզությամբ: Այստեղ հանգամանորեն բացահայտված են միջնադարյան Հայաստանի զարգացած պետական միավորումներից մեկի կազմավորման պատմության հարցերը՝ կապված ոչ միայն ժամանակի հայկական իշխանությունների, այլև Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության հետ նշված իշխանությունների փոխհարաբերություններին ու առնչություններին:

Գ. Գրիգորյանի միջնադարագիտական հետազոտությունները նոր որակներ ու մղումներ ստացան նրա հաջորդ՝ «Նվիրատվությունները Անիի եկեղեցիներին ու վանքերին» (Ս. Էջմիածին, 2002) աշխատության մեջ: Գիտնականն այստեղ ուսումնասիրել է Բագրատունյաց մայրաքաղաքի տնտեսական ու հոգևոր կյանքը, լայն հենքով վերհանել միջնադարյան հայոց այդ ոստանի ուրույն դեմքն ու դրա միջոցով՝ նրա առանձնահատկությունները:

Գ. Գրիգորյանի միջնադարագիտական հետազոտությունները նոր որակներ ու մղումներ ստացան նրա հաջորդ՝ «Նվիրատվությունները Անիի եկեղեցիներին ու վանքերին» (Ս. Էջմիածին, 2002) աշխատության մեջ: Գիտնականն այստեղ ուսումնասիրել է Բագրատունյաց մայրաքաղաքի տնտեսական ու հոգևոր կյանքը, լայն հենքով վերհանել միջնադարյան հայոց այդ ոստանի ուրույն դեմքն ու դրա միջոցով՝ նրա առանձնահատկությունները:

տուկ տեղը հայկական մայրաքաղաքների պատմության մեջ: Իր հետազոտական թեման ու ուղղությունը մշակելով տնտեսական փոխհարաբերությունների ինքնատիպ կտրվածքով՝ Գ. Գրիգորյանն այստեղ շատ ուշագրավ բացահայտումներ է անում հայկական հոգևոր կազմակերպության կալվածքների, դրանցում նվիրատվությունների ծանրակշիռ նշանակության, եկեղեցապատկան սեփականություններից գոյացած եկամուտների, սեփականատիրական իրավունքի և սրանց միջոցով՝ եկեղեցու ազգային ու հոգևոր նշանակության վերաբերյալ: Գ. Գրիգորյանն իր ուսումնասիրությունն ամբողջացրել է նվիրատվությունների չափերի ու արժեքի, նվիրատուների սոցիալական կազմի ու նրանց նպատակադրումների խորամիտ լուսաբանումներով, որով և այս աշխատությունը, ժամանակի գույքային-սեփականատիրական հարաբերությունների բնութագրական կողմերը վերհանելուց զատ, համակողմանիորեն ներկայացնում է հայ եկեղեցու ազգային ու հասարակական ազդեցությունը:

Ինքնատիպ ու հարուստ տեղեկատվական-տարեգրական արժեք ունի Գ. Գրիգորյանի «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 60 տարին» (Երեվան, 2003) աշխատությունը: Իրեն հատուկ բծախնդրությամբ և ստուգապատում գրչով Գ. Գրիգորյանը վերարտադրել է ինստիտուտի մի ամբողջական փուլի պատմությունը, նրա գիտակազմակերպչական կառուցվածքը, գիտահետազոտական ուղղություններն ու զարգացումները, այս ամենը իրականացնող մարդկանց աշխատանքը և ավանդը, ցույց տվել գիտական այդ հաստատության տեղը հայագիտության անդաստանում:

Գ. Գրիգորյանն աչքի էր ընկնում բացառիկ ազնվությամբ, շիտակությամբ և մարդկային այլ բարձր հատկանիշներով: Մաքուր խղճի տեր այդ մարդը հասկանալի հարզանք ու հեղինակություն էր վայելում իր մերձավորների ու գործընկերների միջավայրում, այդ թվում և երիտասարդ գիտաշխատողների մեջ, որոնց հանդեպ ուներ խորհրդատուի և խստապահանջ բարեկամի անկեղծ վերաբերմունք: Նա լի էր գիտական մտահղացումներով ու ծրագրերով, որոնք իրականացնելու էր մոտալուտ առաջիկայում և որպիսիք չկարողացավ կյանքի կոչել անագորույն ճակատագրի բերումով: Եվ մնաց մարդը, անհատականությունը և գիտնականը՝ իր անմոռաց հիշատակով, բարությամբ ու գիտության մեջ ներդրած անուրանալի վաստակով:

Գ. Գրիգորյանի մահվամբ հանդեսը կորցրեց իր անկեղծ բարեկամին ու բանիբուն հեղինակին, որն առանձնահատուկ հարզանք ուներ գիտական տպագիր խոսքի հանդեպ և սիրով էր աշխատակցում մեր հրատարակությանը: